

\*\*\*

Առլեն Շահվերդյանի «Ապրելու իրավունք» գիրքը նվիրված է սիրված և հանրաճանաչ կենդանատեսակներից մեկին՝ առյուծին: Գրքի շարադրանքն ու սյուժեն հիմնված են տարբեր աղբյուրներից ստացված տեղեկույթի վրա:

Հեղինակը իր գրքում հիմնավորում է, թե ինչու է ընտրված հենց այս տեսակը և տալիս է բավականին լայն ու ընդգրկուն տեղեկույթ առյուծի էվոլյուցիայի, կենսաբանության, ինչպես նաև պատմական ու ներկայիս ապրելավայրերի վերաբերյալ: Նա մանրամասն պատմական տեղեկություններ է տալիս նաև տարբեր պետությունների, ներառյալ՝ Հայաստանի պետական խորհրդանիշներում այս կենդանու պատկերի օգտագործման մասին:

Գիրքն ընթերցելիս առանձնակի հետաքրքրություն են առաջացնում հեղինակի անձնական պատկերացումները Աֆրիկայի բնության մասին: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն բնության հատուկ պահպանվող տարածքներում այս կենդանատեսակի պահպանության մասին տեղեկությունները:

Հեղինակի մտորումները, փաստարկներն ու հիմնավորումները ցույց են տալիս բնության և, մասնավորապես՝ առյուծ կենդանատեսակի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքը:

Գիտական այս ուսումնասիրությունը ունի կարևոր բնապահպանական, ինչպես նաև կրթական և ճանաչողական մեծ արժեք հատկապես երիտասարդ սերնդի համար:

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF)  
հայաստանյան մասնաճյուղի<sup>3</sup> տնօրեն,  
կենսաբանական գիտությունների թեկնածու  
**Կարեն Մանվելյան**

03.06.2010

---

<sup>3</sup> Տես «WWF հայաստանյան մասնաճյուղ» (<http://www.armenia.panda.org/>), «About WWF–Armenia» ([http://www.panda.org/who\\_we\\_are/wwf\\_offices/armenia/](http://www.panda.org/who_we_are/wwf_offices/armenia/)) և «WWF–Armenia Team» ([http://www.panda.org/who\\_we\\_are/wwf\\_offices/armenia/our\\_work/staff/](http://www.panda.org/who_we_are/wwf_offices/armenia/our_work/staff/)):

\*\*\*

Առլեն Շահվերդյանի «Ապրելու իրավունք» աշխատությունը բնագիտական, պատմական, մշակութային ոլորտների վերաբերյալ տվյալների մեծածավալ վերլուծություն է, որը, անկասկած, մասնագիտական կարծիքների լայն արծագանք կունենա: Շարադրանքի յուրօրինակ ոճն ու ներկայացված տեղեկույթի բազմակողմանիությունը ստեղծում են գիտական մոտեցմամբ լուրջ ընդհանրացումների և համեմատական ուսումնասիրությունների իրականացման տրամադրվածություն բարձր որակավորում ունեցող բազմաթիվ մասնագետների շրջանում և խորապես կնպաստեն ստույգ և կեղծ գիտական աղբյուրների տարանջատմանը: Հեղինակի բազմամյա մանրակրկիտ տքնաջան որոնումների շնորհիվ կազմված, կենդանական աշխարհի ներկայացուցիչների կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունները և կյանքի պայմանները լուսաբանող ակնարկի ծավալը խորին հարգանքի և գոհունակության զգացում է առաջացնում, ապահովում ճշգրիտ գիտական արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ տվյալների բազմածնություն, ստեղծում հետազոտական աշխատանքի նոր լայնածավալ դաշտ: Աշխատության գրավիչ և հետաքրքրաշարժ գեղարվեստական լուծումը լավագույն ձևով արտահայտում է հեղինակի փիլիսոփայական սկզբունքներն ու հայրենասիրական զգացումները: Հայ ընթերցողին է տրամադրվել առանձնահատուկ, չափազանց հետաքրքիր և գեղեցիկ նյութ, որի նշանակությունը դժվար է թերագնահատել:

Բնապահպանական խնդիրների լուծումը ռազմավարական նշանակություն ունի հասարակության զարգացման համար: Ա. Շահվերդյանի «Ապրելու իրավունք» աշխատությունը, անկասկած, կնպաստի բնապահպանական մտածելակերպի զարգացմանը և բնության արժեքների վերագնահատմանը: Հարուստ պատմություն ունեցող մեր հայրենիքի համար առաջնահերթ նշանակություն ունեն շրջակա միջավայրի պահպանությունը և պաշտպանությունը: Խախտելով միջավայրի ներդաշնակությունը, միլիոնավոր տարիների ընթացքում ստեղծված համաչափությունն ու կայունությունը՝ մարդը աղետալի վիճակ է առաջացնում հենց իր համար: Եթե մենք մեր շնորհակալական վերաբերմունքը ցույց չտանք բնության նկատմամբ, նա մեզ կպատասխանի իր հզորության ամբողջ ուժով: Իսկապես, իրավունք չունենք անուշադրության մատնելու ապագա սերունդների երջանկությունը:

Շնորհակալություն հեղինակին: Ցանկանում ենք, որ նրա ստեղծագործական նախածեռնությունը շարունակելի լինի:

ՀՀ բնապահպանության նախարարության  
Հայաստանի բնության պետական թանգարանի տնօրեն **Գայանե Ղազարյան**,  
թանգարանի ավագ գիտաշխատող **Լիլիա Հակոբյան**

12.05.2010

\*\*\*

Առլեն Շահվերդյանի «Ապրելու իրավունք» գործը գրավում է ընթերցողին առաջին իսկ տողերից: Այն նվիրված է կենդանական աշխարհի ամենագորեղ կենդանիներից մեկին՝ առյուծին: Վաղնջական ժամանակներից մարդը ոչ միայն վախեցել է նրանից, այլև հիացել ու երկրպագել է նրան:

Թեև այս գործը ունի գեղարվեստական ուղղվածություն, բայց այն լիովին կարող է ծառայել որպես սկզբնաղբյուր Կատվագգիների ընտանիքի ամենահզոր ներկայացուցիչներից մեկի ամբողջական բացահայտման համար: Գիտական բարեխիղճ մոտեցումը և ճշգրիտ մատուցումը ոչ թե ծանրացնում են գեղարվեստական գործը, այլ հակառակը, գեղարվեստական ֆոնը գունեղ և հյութեղ է դարձնում գիտական այն հսկայական տեղեկությւնը, որը ներկայացնում է հեղինակը: Շատ քիչ հեղինակների է հաջողվում պահպանել հավասարակշռություն՝ գիտական ճշմարտացիության և գեղարվեստական երևակայության մեջ: Նման հաջողված գործ կարելի է համարել Ա. Շահվերդյանի «Ապրելու իրավունքը», որը վերջացնելուց հետո ընթերցողի մոտ մնում է մի զգացողություն. յուրաքանչյուր կենդանի արարած ապրելու իրավունք ունի, և այդ իրավունքը պաշտպանելը մարդու պարտականությունն է:

Ողջունելի է, որ մեկ երիտասարդի կողմից կատարվել է մի ամբողջ գիտական խմբի աշխատանք: Անսահման են այն սերն ու նվիրումը, որոնցով նա տրվել է այս գործին:

Գիրքը վերջացնում ես ու մտովի վերադառնում մանկություն՝ հասկանալով, թե ինչու փոքր հասակում քո խորհրդային ամենասիրած անիմացիոն ֆիլմը առյուծի մասին «Ամենա, ամենա, ամենա» հեքիաթն էր և, իսկապես, այդ կենդանին Ամենախելացին, Ամենախմաստունը, Ամենագեղեցիկն է ու այդ «ամենա»-ների շարքը կարելի է բազմապատկել:

Հայաստանի պատմության թանգարանի բաժնի վարիչ,  
պատմական գիտությունների թեկնածու  
**Արմինե Զոհրաբյան**

13.05.2010